

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

# ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐՈՒ

ԱԴՐԵՖԱՆԻ ԼԵՆԻՆՑԱՆ  
ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ՝—  
ԿՈՄՅԵՐԻՏ ԳՐՈՂՆԵՐԻՑ

ԱԶԵՐՆԵՐԸ—1032



891.99-82  
4-68

2011-05  
ՀԱ 358  
32-Ն  
ՃԿԸ

# ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐՈՒ

Աղրբեջանի Լենինյան  
Կոմյերիտմիության՝ —

Կոմյերիտ գրողներից

## ՑԱՆԿ

ՅԵՐԵՒԱ.

Ա. Հակոբ. — Առաջին քայլը (պատմվածք)	3
Բ. Մայիս. — Անթարթ հայացք (վոտ.)	10
Գ. Շահյան. — Հարվածային կոմյերիտներին (վոտ.)	12
Բ. Տրիբունի. — Հերոսական (վոտ.)	14
Յու. Ֆոմին. Հազարականը (վոտ.)	15



56494-66

Baş Mətbuat Mədənlili vəkili 4171. ADN 345 Sifariş 571.  
Tirazlı. 2000.

AZƏRNƏŞR mətbəəsində basıldı.

## ԱՐԱՋԻՆ ՔԱՅԼԸ

Ավագ վարպետ Զոլոտովը լավ եր հիշում, յերբ յերեք տարի առաջ Խիրուլան ֆարբիկա մտավ, հինգ որ միայն աշխատեց վորպես սեվ բանվոր, այդ պատճառով Զոլոտովը միշտ ասում եր.

— Խիրուլան շատ լավ տղա ե, բայց մի քիչ, վոր մեծ-մեծ բաների մասին և մտածում, դուրս չի գալիս, այ որինակ այսոր իրենց կոմսոմոլի բջիջում հայտարարել ե, թե յես ուզում եմ մի մեքենա հնարել, վորը գործվածքային ցեխում բրակ յեղած թելը, վոչ թե գանակով կտրել այլ այնպես բացել վոր վոչ թելը փշանա և վոչ կատուշկան, վորը մեծ ինայողառություն կտա: Սակայն յես գիտեմ, վոր Խիրուլան այդ հարցում մեծանոգություն ե անում, ուրիշ բան և լավ աշխատել, հարվածային լինել պլանը բարձրացնել, վորակով աշխատել, այդ Խիրուլան անում ե, բայց ուրիշ բան և գյուտ հնարել: Խիրուլայի հայրը, վորը նույնպես ջուհակ եր, համաձայն եր Զոլոտովի հետ: Խիրուլան վոչինչ չեր ասում, միայն շարունակում եր գործը, ֆարբիկայի գեկավարությունը նույնպես թույլ վերաբերունք եր ցույց տալիս բանվորական առաջակություններին: Մի անգամ Խիրուլան ջուհակների զաղգահների մոտով անցնում եր, ջուհակներից մեկը բարձր ձայնով կանչեց:

— Հեյ գյուտարար Խիրուլա, հի.. հի..

Խիրուլան արհամարական հայացքով նայեց կանչողի կողմը և լուս շարունակեց ճանապարհը: Այդ որվանից Խիրուլայի ուսերին մի ծանր բռն եր իջել վորը թեթևացնելու համար պետք եր մտածած գործը գլուխ բերի: Վերջապես բանվորների ցըանում տարտել եր Խիրուլայի մտածած գործի լուրը, մի քանիսն անգամ արհամարում եյին:

Վոչինչ սկզբնական ցրջանում դժվարություն կլինի, մտածում եր Խիրուլան: Ֆարբիկայի ինժեները շատ քիչ ուշադրություն եր դարձնում: Շատ անգամ ել բյուրոկրատություն անում: Ամենալավ հարվածային ջուհակն ամբողջ ցեխում դա Խիրուլան եր. այդ մասին լավ գիտե ֆարբիկայի կոմսոմոլի կոմիտեն: Զուլհակներից մի քանիսը թերթը փոած զաղգահի վրա կարգում եյին և յերբ զաղգահները սկսում եյին համաշափ աշխատել. Խիրուլան կարդում եր թերթի տեխնիկայի և գիտության բաժի-

Նը, մի բոպե նրա մտքերը յերկաթե ռելսների պես ձգվում եյին  
հեռու, հեռու ու բացվում եր նրա առաջ նորանոր մտքեր և զը-  
ծեր, ինչ վոր մեքենայի մասեր, վորին փափազում եր ինքը: Մե-  
քենայի մասերը կամաց-կամաց պարզվում եր, բայց ան վեր-  
ին մի քանի մասերը դեռ պարզ չեր կարողանում պատկերա-  
ցնել, այդ պատճառով շարունակում եր դեռ յերկար մտածել և  
քիչ եր մնում գլուխը դիպչեր դադարին:

— Զգույշ, Խիրուլա, — կանչեց վարպետ Զոլոտովը:

— Ահա թե ինչ...

— Ինչ պատահեց քեզ Խիրուլա, — մոտենալով խորհրդավոր  
հարցրեց վարպետ Զոլոտովը նայելով դադարին, ապա  
աչքովը ընկալ տախտի վրա ընկած սպիտակ թուղթը, վերցրեց  
նայեց մի քանի մասերին, սովորական մեքենայի նախագիծ  
եր՝ ավելի շուտ դադարին եր նմանվում, իսկ մի քանի մասեր  
քոլորովին այլ եր և դրսի կողմից ցցված յերկում եր ինչ վոր  
ատամներ դեռ թերի:

— Այս ինչ ե Խիրուլա, — հարցրեց վարպետ Զոլոտովը:

— Դա իմ գյուտի առաջին քայլն ե, վարպետ Զոլոտով, պա-  
տասխանեց Խիրուլան: Զոլոտովը լոեց, մի քայլ հետ գնաց մտած-  
կոտ հայացքով նայեց Խիրուլայի մեջին, ապա գանգուր մաղե-  
րին և գնաց դեպի յերկրորդ ցեխը, վորտեղ աշխատում եր Խի-  
րուլայի հայրը:

— Հեյ, ծերուկ, կարծես թե տղիցդ մի բան և դուքս գալիս,  
արդեն նոր կատուշկա մաքրելու մեքենայի նախագծի մի փոքրի  
մասը ինձ ցույց տվեց:

— Են, դու ել նրա ջահելությանն ես հավատում, ինժեները  
գոր ինժեներ և սկի չի կարողանում մի նոր մեքենա հնարեց ուր  
մնաց զուլհակ Խիրուլան հնարի: Գործ ունես, գործք արա, պլան  
կատարի, ինչ ես խոսում:

— Զե, ծերուկ Խիրուլայի մասին ունեցած կարծիքս փոխվեց,  
այն ել հիմնովին:

— Լավ, գնա, յերեկի դու ել ես ուզում գյուտ հնարել:

— Զե, չիմացար, հետո կսխալիս, այսորվանից յես պարտա-  
վորվում եմ ոգնելու Խիրուլային իրեն նպատակին համելու  
համար և այդ մասին յես կխոսեմ ֆարբիկայի կուսկովիկի  
քարտուղարի և ինժեների հետ: Ծերուկը մի բոպե յերերաց, կար-  
ծես թե մեկը թափահարեց կանգնած տեղը:

Գուղովը բարձր աղաղակեց, Խիրուլան մտածկոտ քայլերով  
գնաց ֆարբիկա լի կոմսոմոլի բջջի քարտուղարի մոտ: Խիրուլա-  
յին թվում եր, թե գլուխը ավելի և ծանրացել և մտքերը փոքր

ինչ ցրված են: Կոմսոմոլի կոմիտեյում վոչ վոք չկար: Խիրուլան  
թիկն տվեց նստարանին մինչև քարտուղարի գալը: Քարտուղա-  
րը մախորկի գլանակը փաթաթելով ներս մտավ նայելով Խի-  
րուլայի սառը հայացքին՝ հարցրեց:

— Գործերդ ինչպես են, Խիրուլա:

— Հետո կասեմ, մի մախորկա տուր:

Քարտուղարը մախորկի տուրի մեկնեց դեպի Խիրուլան, իսկ  
այդ ժամանակ Խիրուլայի հայրը ծանը բատինկաները դեմքին  
գոփելով ներս մտավ: Խիրուլան և քարտուղարը իրար յերեսի  
նայեցին:

— Արի, տուն եմ գնում, գյուտարար Խիրուլա:

— Լավ, ասաց Խիրուլան, — մոխրագույն ապակիների առաջ  
կանգնեց, ուր դիմացը ձգվում եր բարձր ծինելույզներով գործա-  
րանը, իսկ տափակ տանիքների վրայից յերեվում եյին քաղաքի  
բարձր տները, գլուխները թաղած թանձր մշուշի մեջ: Ռելների  
վրայով տրամվայը մտանում եր ֆաբրիկային: Բանվորները  
աշխատանքից գուրս գալով մոտենում եյին ջրի ծորակին, սառը  
ջրով հովացնում այրվող յերեսներն ու շտապում տրամվային  
համելու համար:

— Մի տիրի Խիրուլա, մենք բոլորս կոգնենք քեզ, վոր գու-  
քո գյուտը հաջողությամբ վերջացնես, մեջքին խփելով սիրտ տվեց  
կոմսոմոլի բջջի քարտուղարը: Խիրուլան թեթև ժպտաց և քթի  
տակ կամաց շշնջաց.

— Այս, հաջողությամբ կվերջացնեմ:

## 2

Խիրուլային թվում եր, թե պատուհանի հետև աղմկում եր  
քաղաքը...

Լուս նստել եր սեղանի առաջ մտածկոտ հայացքով նայում եր  
նոր մեքենայի նախագծին: Որեկան մի նորություն եր մտցնում  
մեքենայի նախագծի մեջ, բայց վերջնականապես նախագիծը տա-  
լը Խիրուլան շատ եր դժվարանում, վորի համար որերը գալիս  
անցնում եյին, իսկ Խիրուլան շատ ժամանակ շփոթվում եր: Գի-  
շերները յերկար նստելու համար հայրը մշտական բարկանում եր:

— Բավական ե, դատարկ բաների վրաքիչ մտածիր, քո բանը չի:

Բաց պատուհանից փշում եր մայիսային խոնավ քամին, ա-  
ռաստաղից կախված լամպը լուսավորում եր յերկհարկանի տան  
բիտոնի կորվ սիպտակացրած պատերը: Հեռվից, շատ հեռվից  
լսվում եր ֆարբիկայի մաքոքների շմչակոցը: Խիրուլան գծում  
եր նորանոր մասեր, շփոթվում եր մի բոպե, մոռանում եր ամ-

բողջ մասերը—ախրություն... Նորից աչքերում մի փայլ եր ստանում, սպիտակ թղթի վրա գծվում եր մնացած թերի մասերը, ուրախություն և մի փոքրիկ ճիչ:

Գիշերը խորանում եր, բոլորը քնած յեն, միայն Խիրուլան եր նստած, սեղանի վրա փուած սիպտակ կտավի լայնությամբ թղթի վրա գծում եր, անվերջ գծում... Եերկու դժվարին գծերի ծայրը իրար միացնելով Խիրուլան բղավեց:

— Ահա...

Հայրը տեղից վեր թռավ: Խիրուլայի աչքերը կարծես թե արնով լցված լինելին: Զեռքերի մեջ ամուր սեղմել եր նոր մեքենայի նախազիծը:

— Ինչ ե պատահել քեզ, Խիրուլա, խելագարվել ես, ինչ ե, — ճշած հայրը մոտենալով Խիրուլային:

Նա պատրաստ նախագիծը փուց հոր առաջ, հայրը վոչինչ չհասկավ, միայն մոռայլ հայցքով նայեց Խիրուլային: Խիրուլան այլևս չհամբերեց, դուռը շրխկոցով հետ քաշեց և անհետացավ խավարի մեջ: Մի քանի ըոպերից հետո գործարանի գուղովը բարձր աղղաղակեց քաղաքի վրա:

Արդեն լուսանում եր:

3

Մաքոքները ծափ արագությամբ թռչում եին: Անիվները յերեմն այնպիս սուր ճիչ եյին արձակում, վոր կորպուսներում մարդկանց վոչ մի ձայն չեր լսվում: Մաքոքների և անիվների չխչխկոցը կատարյալ մի համերգ եր ստեղծում: Խիրուլան լուռ եր, վոչ վոքի վոչինչ չեր ասել զյուտի հաջողության մասին: միայն յերբ վարպետ Զոլոտովը ներս մտավ, բերանը կամաց մոտեցրեց վարպետի ականջին ու ցածր ձայնով ասաց.

— Դյուտս արդեն պատրաստ ե:

— Ախ ջան, ախ ջան,— վոտքերը արագ խաղացնելով թռչուեց վարպետ Զոլոտովը:

— Դեռ կամաց, — ինժեները դրական պատասխան չտվեց:

— Ինչպիս, ինչպիս—սթափկելով բացականչեց Զոլոտովը, ուղիղ նայելով Խիրուլայի աչքերին: Ահա թե ինչ եմ հասկանում, լավ հետո յես կիմանամ պատճառը, ավելացրեց Զոլոտովը և գնաց դեպի ինժեներ Թաղանոսի կաթինետը:

Ինժեները ուրախ գեմքով նայեց Զոլոտովին, բայց հանգիստ նրա սառը հայցքին: Թաղանոսը գլուխը կախեց ինչպոր գրքի վրա, խույս տալով Զոլոտովի հայցքից: Նա կանգնեց ուզիղ ինժեների դիմաց, գլուխը շարժելով հարցրեց:

— Ընկեր, Թաղանոս, դուք ծանոթ եք հարվածային բանվոր Խիրուլային:

— Շատ լավ, — ցածր ձայնով պատասխանեց Թաղանոսը, գլուխը առանց գրքի վրայից բարձրացնելու:

— Իսկ զյուտի հետ:

— Նույնպես:

— Ինչեք կարծում, կարող ե մի ոգուտ տալ մեր արտադրության, չե:

Ինժեներ Թաղանոսը մի րոպե շփոթվեց, շփելով ճակատը, գլուխը բարձրացրեց գրքի վրայից:

— Տեսնենք, գեռ շատ պակասություն ունի մինչև իր նպատակին հասնելը:

— Վոչ, նա արդեն պատրաստ ե, այսոր յես արդեն ծանոթացա մեքենալի նախազծի հետ:

— Լավ, ասաց ինժեները, և ակնոցների տակից նայեց գործարանի ծխնելույզներին:

— Անպատճառ պետք ե արտադրական խորհրդակցությունում քննության դնել, գյուտն իր մեջ շատ բան և պարունակում, — ասաց Զոլոտովը և գնաց գետի գործվածքային կորպուսը, վորտեղ աշխատում եր Խիրուլան: Թաղանոսը Զոլոտովի հեակից յերկար նայեց մինչև նա մտավ գործվածքային կորպուսը:

— Լավ, վոտնամանի ծայրը գետնին խփելով ասաց Թաղանոսը: Զե վոր այս գյուտի վրա մեծ ինժեներները շատ են մտածել, վհնց կարող ե մի դազգահի վրա աշխատող Խիրուլա հնարի, կարծես շրջապատի իրերին պատմելով խոսում եր ինժեները: Այսքան ժամանակ վոր հիմնվել ե ֆարբիկան, մենք մշտական մտածել ենք, թե ինչպես անենք, վոր ազատվենք բրակի ձեռքից, իսկ հիմա Խիրուլան հնարիել ե մի նոր մեքենա, վորը կատուշկայի վրայից կմաքրի թելը և կատուշկան կմեա անվնաս: Զե, չի կարող, վճռական շեշտով ձեռքը սեղանին խփեց Թաղանոսը: Ով ե իմանում գուցե, չե, չե, չե... Նրա ճակատի կնճիռները՝ ավելի սեղմեցին ու ցածր ձայնով հաստատեց:

— Զե, չի կարող պատահել...

4

Արեն ընկեր եր գործվածքային կորպուսի պատուհանից, բաժակի մասնիկները վխտում եյին ողում, յերբ դրսից վշում եր զովքամին, նրանք կաչում են պատերին կամ առաստաղին: մաքոքները ցատկում են սպիտակ թերերի արանքից, իսկ կտավը փաթաթվում ե սոնակի վրա: Խիրուլան դազգաների մեջ աեղ

կանգնած թելում եր մաքոքները: Վալովետ Զոլոտովը հաշվապահի սենյակից մի մեծ թղթի դարս կռնատակին մոտեցավ Խիրուլլայի դազգային:

— Ահա, Խիրուլլա ջան, այս թուղթը կախիր դազգահիդ տափանից, վորտեղ գրված ե, վոր Խիրուլլա Մաքսուրովը, այս ամիս իր պլանը կատարել ե հարյուր քսան տոկոսով: Խիրուլլայի աչքերի բիբերը ավելի լայնացան:

— Ճիշտ ե, վարպետ—հենց յես ել այս յերեկո հորս հետ այդպիս հաշվեցինք, իսկ նա ինձ հետ վիճում եր, թե հարյուր տոնկոս հաղիվ լինի: Վարպետը ժպտալով խփեց Խիրուլլայի մեջքին: Կոմյերիտականերից մի քանիսը հավաքվեցին Խիրուլլայի շուրջը.

— Տեսեք, ելի Խիրուլլան բոլորից բարձր կատարեց պահնը, ասում ե կոմյերիտականներից մեկը:

— Վոչինչ Խիրուլլա, յեկող ամիս քեզ պիտի հասնեմ,—ասում ե կոմյերիտական չուհակներից մի ուրիշը:

— Ախ, յեթե այն մեկն ել այդպես հաջող կատարեմ, ամեն ինչ սրտովս կլինի:

— Ինչ այն մեկ... մի կասկած ե առաջանում կոմյերիտականների մեջ:

Խիրուլլան վոչինչ չպատասխանեց, միայն վարպետ Զոլոտովին ականջին ցածր ձայնով ասաց:

— Ինձեներն ինչ ասացի: Յեկող արտադրական խորհրդակցությունում ամեն ինչ պարզ կլինի: Կարծես Խիրուլլայի ուժերը կրկնապատկվեցին, իսկ մաքոքներն ավելի գլարթ չխչելացին:

\* \* \*

Բանվորները աշխատանքից դուրս գալով հանդիպեցին ֆարբիկայի դուն վրա կպցրած հայտարարությանը, վորտեղ հայտնը-վում եր ինժեներ Թաղանոսի ղեկցուման՝ մասին և ինդրվում եր բոլոր բանվորներին ներկա լինել: [Մի քանի բոպեյից հետո բոլոր բանվորները հավաքվեցին, Թաղանոսը բլոկ-նոտի թերթերը շուր տվեց, քիչ հազարով սկեց զեկուցել.

— Ճիշտ ե, մենք մինչև հիմա մեր ֆարբիկայում տեխնիկայի ընազավառում այնքան աշխատանքներ չենք տարել, վորի մասին իմ զեկուցումը լինի հարուստ, միայն ուժեղ պայքար ենք մղել պլանների բարձրացման համար, իսկ բրակը բավականին պատվավոր տեղ ե գրավում, մանավանդ գործվածքային կորպուսում, վորտեղ թե փշանում ե կատուշկան և թե վրայի մնացած թելը:

8

— Բուակաների դեմ դեղ ե ճարված, — ձախեց Խիրուլլայի ընկերներից մեկը

— Բայց մենք դեռ այդ գյուտի վրա չենք վստահում...

— Եատ իզուր, — տեղից բղավեց յերիտասարդ տեխնիկներից մեկը:

Թաղանոսը մի բոպե շփոթվեց և շատ բաներ անկապ արտահայտվեց: Զոլոտովը հանգիստ մոտեցավ սեղանին, կարճ նախադասություններով, բայց կտրուկ պատմեց այն անտարբեր վերաբերմունքը, վոր ցույց ե տվել ինժիներ Թաղանոսը հանդեպ հարվածային բանվոր գյուտարարներին, թերագնահատելով նրանց, գլխավորապես Խիրուլլայի գյուտախն, վորն ամենաուժեղ զենքն ե բրակի դեմ կովելու համար: Այնուհետև խոսեց ֆարբիկայի ամենահին տեխնիկներից մեկը, հավանություն տալով Խիրուլլայի գյուտին: Արտադրական խորհրդակցությունը վորոշեց մի քանի որից հետո անցնել Խիրուլլայի մեքենայի մասերի կառուցմանը և գործվածքային ցեխում վերջ տալ բրակին: Խիրուլլայի դեմքին մի հաղթական ժպիտյերեաց, յերբ Զոլոտովը մեքենայի նախագիծը փուց սեղանի վրա: Բոլորը հավաքվեցին սեղանի շուրջը, անգամ Խիրուլլայի հայրը շվարված մոտեցավ նախագծին ու Զոլոտովի ականջին կամաց շնչարով ասաց:

— Ախը, եր ասածը արեց ելի:

— Այս ծերուկ, Խիրուլլան հաղթեց, բայց դու հիշում, ես յերբ սրանից մի քանի ամիս առաջ մտածում եյլնք, թե ով կլինի այն հնարագետը, վորը հնարի մի մեքենա, վոր կատուշկաների վրա բռակ մնացած թելը զանակով չկտրենք, այլ այնպես բացենք և ոգտագործենք, թե կատուշկա և թե թելը:

— Ճիշտ ե, մենք այդ վաղուց ենք մտածել, բայց յես հույս չունեյի, վոր Խիրուլլան այդ կանի, այս, այս Խիրուլլան, բայց այժմ հավատում եմ Խիրուլլային այնպես, ինչպես հավատացել եմ և հավատում եմ մեր աշխատանքային տեմպերին:

Հայրը Խիրուլլայի զլուխը ամուր սեղմեց կրծքին: Արտադրական խորհրդակցությունը վերջացավ: Բանվորները Խիրուլլային իրանց ուսերի վրա եյին թոցնում:

Մի քանի որից հետո Խիրուլլայի հնարած մեքենան վերջ կտա բրակին և պլանը ավելի կրաքարանա: Գնում եր Խիրուլլան լի հույսերով և հաղթական քայլերով:

9

## ԱՆԹԱՐՁ ՀԱՅԱՑՔ

Սա հանգստյան տունն ե կոմունարների  
Անունով իր մեծ  
Վորպես մի վահան,  
Իսկ սա արձանն ե վեհ ղեկավարի  
Իր ծով աչքերում մի մեծ վոխ պահած:  
Սա հանգստյան տունն ե,  
Վորի դեմ կանգնել ե ահա  
Արձանն այդ, վորպես կոթողը որերի,  
Իսկ նրա դեմ բագում, վորպես պահակ՝  
Ուժն ե ստուգում իր մկանների,

\* \*

Ու մարդն այդ գարուններ քանի,  
Շրջել ե Բագու,  
Հանք ու գործարան,  
Իսկ հիմա կարծես հուզված մի բանից...  
Անհագ նայում ե  
Քաղաքի վրա:

\* \*

Ու տարիներ են անցել, բայց նա յերկար, յերկար  
Նայում ե Բագվի աճող պեյզաժին,  
Ուր նա տեսնում ե յերկաթե ներկան,  
Գիգանտներ հսկա, գորշացած սաժից:

\* \*

Նա անթարթ հայացքով նայում ե հեռու,  
Ուր նրա դեմ ձգվում են նոր բերքի դաշտեր  
Այս որվա գծած  
Մեր ուղիներում  
Արշավող յերթեր, պողպատե վաշտեր:

\* \*

Ու փովել ե նրա դեմ Բուխտան հեռու,  
Ուր դինամոներն են յերգում նավթի հետ,

Վորոնց դեմ ծովն ե անզուսալ յեռում  
Ու նահանջում ե  
Դիրքերից իրաւ:

\* \*

Ծովն ե նահանջում  
Դիրքերից իրաւ,  
Իսկ գնդեր, գնդեր  
Քար ու հող ափած,  
Հանում են վիշակներ ու նոր գործարան  
Տարված մարտով, վոնց զինուց արբած:

\* \*

Վիշակներ, վիշակներ, վոր ծանոթ են նրան,  
Ուր նա միշտ, տարել ե  
Քանի, քանի ժողով,  
Ու չե վոր հենց այս փողոցի վրա  
Նա կազմեց ցույցեր,—  
Թունալի բողոք:

\* \*

Ու վիշակները թվում ե մի մեծ բանակ,  
Վորպես նոր կանքի  
Գնդեր ու տանկեր,  
Յելնում են, վոր իր  
Մարտերը յերգեն,—  
Վորպես պայքարի կարմիր հաղթանակ:

\* \*

Նա կենդանանում ե  
Կարծես թե մի պահ,  
Այս պայքարի հորձանքի թափից,  
Շարժում ե շուրթերն իր ու ապա, ապա,  
Դեմքին իջնում ե մի պայծառ ժպիտ:  
Ու ամեն, ամեն անզամ, յես տեսնում են նրան,  
Հաղթ բոլշևիկյան այդ ղեկավարին,  
Նա զգաստ հսկում ե քաղաքի վրա,—  
Վորպես ուղմական մեծ նավավարի:

## ԳՈՒՐԳԵՆ ՇԱՀՅԱՆ

(Բանվոր մետաղագործ)

### ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԿՈՄՅԵՐԻՏՆԵՐԻՆ

Հերոսական մեր դարում  
Ո՞վ կարող է հանդիսատ նիրհել,  
Յերբ տեմպերն ենք թափահարում  
Մեր կոշտացած բազունիներով,  
Յերբ շենքերն են յելնում աճում  
Բետոնակուռ հասակներով.—  
Ո՞վ կարող է հանդիսատ նիրհել  
Հերոսական մեր այս դարում:  
Տես, քայլում ե հաղթ ու համառ  
Մեխտին, ջլուտ հարվածային,  
Հողն ե գողում նրա քայլից  
Հողը, հողը, նավթով վարար:  
Նա քայլում ե ձեռքին բռնած  
Նոր դրոշը հնդամյակի,  
Տես, քայլում ե հաղթ ու համառ  
Մեխտին՝ ջլուտ հարվածային:

Ահա դեմից յելնում ե նա,  
Կոմսոմոլիստ տոկուն Սեթոն,  
Բարեւում ե պարզ ու անահ  
Ու շնչում ե հաղթ լիաթոք:  
Մեխտին, Սեթոն, Սանդրոն, Վանոն,  
Բրիգադն այդ հարվածային,  
Աշխատում են, նավթ են հանում  
Մեկ տեղ նրանք՝ տնտհաշվային:  
Յեվ իլիչյան նավթահանքում  
Աշխատում են նրանք անդուլ,  
Հողն են պեղում համառ, անքուն  
Ու նասոսն ե խորը քանդում:  
Այդ առաջին բրիգադն ե,  
Ութ կոմյերիտ տղերք են այդ,—  
Կատարում են հարվածային  
Կարգով, տված պլանն արդի:

Յերեկոյան յելնում ե նա,  
Յելնում ե նա խնդուն դեմքով,  
—Քսանյերեք տոկոս, ահա  
Վստրեցնի ենք տվել հանքում:—  
Այդ Մեխտին ե բրիգադիր.

Այդ կոմյերիտ բրիգադի  
Գործից հետո նրանք յելնում,  
Դուրս են գալիս նավթահանքից  
Յեվ բոլորի դեմքին ժպտում  
Առկայծում ե խինդը կյանքին  
Յեվ ութ հոգի նրանք հանդիսատ  
Ներս են մտնում հրաձգարան,  
Կրակում են կրկին, կրկին  
Ու «գլորում» շարքով նրանց:

Սովորում ե զենք գործածել  
Հարվածային բրիգադը,  
Վոր թե նորից լուրթ ծովերից  
Թշնամիներ մեզ վրա գան,  
Բրիգադն այդ յելնի մարտի,  
Զնահանջի նա գիրքերից,  
Վոր գրոհի հաղթ ու արի—  
Ութ սնայպեր, ութը մարտիկ,  
Վոչ թե ութը, —միլիոն մարտիկ,  
Միլիոն ձեռքեր կելնեն մարտի.  
Սավետական հողի համար  
Զեն խնայի վոչ մի կաթիւ—  
Կապայքարեն անդուլ, համառ  
Սնայպերները խորհրդային,  
Հզորավոր մեր գալիքի  
Հաղթանակող կյանքի համար:

## ՀԵՐՈՍԱԿԱՆ

Նրանք ծնվել են գործարանում. մեծացել անիվների մոտ.  
Նրանք սիրել են աշխատանքը հերոսական, իրենց հոր նման.  
Յեկ գրոհի յեն յելել մի որ, լարել ուժը մկանների,  
Աղիախառն քրտինք թափել, ինչպես հերոսներ մաքառման:  
  
Անիվներ են շարժել գործի, շարծիչ ուժովն հաղթական.  
Գործի ժամին հնատուղիաստ,—զբոհ են տվել շարքերով խիտ,  
Շքանշան են ստացել, աշխատանքի հերոսական,  
Յեկ բարձրացել կարմիր տախտակ, վորպես մարտիկ:  
  
Կարմրափայլ յերկրի վրա, վորպես արև սիրտ են բացել,—  
Հնոցներ են վառել ուժգին, և գրոհել այնքան համառ,  
Նինջ, հոգնություն կամ այլ նահանջ դիրքերում չեն չունեցել.  
Այլ յեղել են միշտ ել հերոս և աշխատանքում արկավառ:

\* \*

Յեկ այսպես ամեն առավոտ, յերբ գուդոկն է գործի կանչում,  
Նոր խինդ առած յեխում են նրանք աշխատանքի,  
Յեռանդ ու թափ, բարձր վորակ, նրանց հատու գործն է լինում,  
Յեկ կարմրադրոց կիմ-ը կրծքին հերոսներ մեր մեծ մարտի:

## ՀԱԶԱՐԱԿԱՆ"-Ը

Գնացքը սուլում ե թափով  
Աշնանային դալուկ դաշտերում,  
Մոնչում ե Արագի ափով,  
Վոր ծեզին լինի արտերում:  
  
Մեր խումբը կոմյերիտական  
Մեկնում ե այդ գնացքով,  
Վոր գործի դաշտերում սավետական՝  
Բոլշեկյան կամքով:  
  
Խմբերը անթիվ են գնացքում.  
Մեր խումբը սակայն «հազարական»  
Մեզ ճամբել ե ՑեկԱն, վոր ալթուն  
Հեկավարենք պայքարը հաղթական:  
  
Պատվիրել ե ՑեկԱն, վոր այնտեղ,  
Սավետական բամբակի դաշտերում,  
Հաղթանակի ճանապարհը հարթենք  
Յեկ ձուլվենք պայքարի վաշտերում:

Յեկ խումբը մեր կոմյերիտական  
Ուսած մեծ պայքարի հրահանդ,  
Գնում ե դաշտերը սավետական՝  
Տանելու պայքար ու աշխատանք:  
  
Կայարանը փոքր ե, դաշտն անծայր,  
Արտերը ճերմակ, անսահման  
Իեկ արևն է յերկնքից անմար  
Փողփողում յերփներանգ ու վառման:

Կապույտ բլոչներ շարք,-շարք  
Կանացի կարմիր լաշակներ,—  
Ու, այնտեղ ստեղծել են նոր կյանք,  
Նոր պայքար ու նոր բազուկներ:

Արտերը սրտեր են հուզում,  
Ամեն որ քրտինք ու յեռանդ,—  
Դաշտերում ջրերն են խոսում,  
Արևն է ժպտում յերփներանդ:

Այստեղ ե հիմա բյուրանուն  
Կամքը մեր հումկու, հաղթական,—  
Այստեղ ե պայքարը լեռնանում՝  
Հանուն բամբակի սավետական:



Գինը 30 կող.

72.019

56

80

G 32-1  
RA 358

MD 1

MD 2

+  
+

# KOMSOMOL HÝÇUMU

(Qomsomol jazlıcalarından Azərbaycan Lenin Qomsomoluna)

AZƏRNƏŞR—1932